

գլխաւոր զմեզ: Այս նկատմամբ երկու դաշնագրայ միջև կեցող տարբերութիւնը կողմէն բացատրելի է: Պէտք է զգուշացնել, որ քրիստոնէական ժողովրդաց պաշտպանութիւնն ըստ մանկեղսական մէջ շատ առաջ զնազան է: Բայց մի կարծէք թէ ձեր շնորհիւ է այդ: Այդ տրամադրութեանց ամեն մէկը Այսթէֆանոսի դաշնագրէն առնուած էր: Ուստի բանալի բռնի առած էր զանոնք թուրքէն, մինչդեռ դուք երբեք այդպիսի տրամադրութիւններ չպիտի կրէք: Դուք քրիստոնէական պաշտպանութեան վերաբերող այդ տրամադրութիւններն Այսթէֆանոսի դաշնագրին մէջ դառաք, և դուք թող չհամարձակելով՝ ընդունելիք զանոնք: Թուրքիա խոտուածներ տրւած է ո՛չ թէ բոլոր տէրութեանց, այլ նոյա իւրաքանչիւրին, և Ռուսիոյ կամ ուրիշ որ և է տէրութեան թուրքիոյ հետ վեճի բռնուելէ և պատերազմ բանալէ առաջ ընդհանուր դործողութեան մը տրամադրութիւն չկայ: Այդ, չէ՛ք տեսներ թէ ինչ մեծ վտանգի մէջ է Եւրոպան: Մեր պատերազմի ենթարկուելուն ժամանակը թրքաց կամքէն կախալ է: Անդրոյ նախարարութեան մէջ կա՞յ արդեօք անդամ մը, որ կարծէ թէ բարենորոգման համար թուրքիոյ ըրած խոտուածները պիտի կատարին: Այդ բարենորոգմանը ամբողջ Եւրոպական թուրքիոյ կը վերաբերին: 1856ի առաջարկութեանց նման ընդհանուր չեն, ոյլ որոշ և սահմանաւոր: (Շարունակել)

ՀՅՈՒՄՈՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Լոնտոն 23 փետր.

Տէյլը Թէյլորաֆ լրագիրն հետագիր մը կը հրատարակէ ծանուցանող թէ Ռ. շընչալանայ մասնախումբն հետեւեալը գրեր է. Կուրծ, Տրէնթէյն և Ջուրոֆ գործարարաց. — « Ի զուր լուսավառութիւններ կը պատրաստէք կայսեր դաշակալութեան տարեգրածին առթիւ քանի մ'օրէն տեղի ունենալիք հանգիստներու համար, որովհետեւ յետագիտականք այն պիտի լուսավառութիւններ կը պատրաստեն, որոց նմանը չէ տեսնուած Ներոն կայսեր գլխով այրելէն ի վեր: »

Լոնտոն 23 փետր.

Ռոպերթսը զորավարն հրաւիրեց զՍ. Գլաններն, որպէս զի վեհապետ մ'ընտրելու համար երեսփոխանաց ժողով մը զուարեան Գլանային մէջ:

Այս առաջը հասած հետեւիք:

Բեդրասուրի 24 փետր.

Ար հաւաստեն թէ Թրէֆաֆ գործարարը կայսերական Ջուրոֆին պաշտան կառավարիչ տնտեսներ է: Բոլոր քաղաքին մէջ հսկողութիւնը կը կրկնապատկի Ռշչալանայ սպանողիքներուն պատճառաւ: Կայսեր տուղտութիւնը լու է:

Սօֆիայէն կը հեռագրեն թէ Պուլաւրիոյ սահմանադրութիւնը փոփոխելու և իշխանին իրաւասութիւնն աւելցնելու խօսք կայ, ազգային ներկայացուցիչ թիւը 80ի սահմանափակելով, 18 անդամէ բաղկացեալ Մերակոյտ մը կազմելով և մամուլը գրաքննութիւն հաստատելով:

Բեդրասուրի 24 փետր.

Նոյնիւնիս 24 փետր. Ռուսական լրագիրն Հէրաթի չեզոքութիւնն և Ս. Գլանային նայ կրճերուն ստացումը կ'առաջարկէ Անգլիոյ: Յիշեալ լրագիրը կը յորէ. — Ռուսիա Հնդկաստանը դարձելու միտք չունի: Եթէ Անգլիա իւր ազդեցութիւնը Պարսկաստանի միջոցաւ մինչև Կասպից ծով, և Կրան միջոցաւ Սև ծով տարածելու ցանկութեամբ մարտնչէ, Ռուսիոյ դէմ թշնամական աշխարհավարութիւն մը բռնած կը լինի: Եւ հետեւեալը Անգլիայի պատասխանատու պիտի մնայ այս գործին հետեւանայ:

Պուլաւր 24 փետր.

Երեսփոխանաց ժողովը Տոպուճայի

կազմութեան վերաբերեալ օրէնքը քուէարկեց սա բարեփոխմամբ թէ Տոպուճայի մէջ կառուածական սեփականութեան Օսմանեան օրէնքը կառավարող պիտի շարունակէ մինչև որ Ռուսիոյ երեսփոխանաց ժողովը յատուկ օրէնք մը քուէարկէ:

Լոնտոն 24 փետր.

Օսմ. Բան.	10 7/8
Փոխ.	1863 12 1/2
»	1869 12 3/8
»	1871 67 1/4
»	1873 19 1/4
»	1873 11 1/4
»	Երկար. 85 1/2
Անգլ. Բան.	98 3/16

Փոխ. 24 փետր.

Օսմ. Բան.	10.95
Դադար.	80.0
»	116.25
»	»
»	»
»	83.65

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Կայսերական հրամանաւ.

Հաստատուելոյն կրթութեան նախարար Միւնիսթր Էֆէնտին վեդիրի աստիճան բարձրացաւ:

Վեհ. Սուլթանը Շուէթի և Նորվեգիոյ թագաւորին տուած Օսմանիէ տականական պատուանշանն Սթոքհոլմ տանելու պաշտօնը Միւնիսթր Ֆուստի փաշային յանձնեց:

Մայրաքաղաքիս դեսպանատունը Բիթապէթի վեհանքին արտաքին գործոց պաշտօնատունէն դատական պաշտօնատունը փոխադրուելուն դէմ բողոքեցին, և նոր վեհանքին հետ ամեն հաղորդակցութիւն ընդհատուցին:

Փարիզի լրագիրը կը ծանուցանեն թէ Վիեննայի Օսմ. դեսպան Լուիս Գլան փաշան փարիզի դեսպան անուանել է: Լուիս Գլան փաշան Գիտի մէջ Յոյն ծնած էր, բայց թուրքերը զինքն իւր ընտանիքէն կորցելէն և մանկու թիւնէն ի վեր խալափութեան մէջ մեծցած է: Յայտնի է թէ փարիզի նաւընտրի գետնամը քանի մը տարի առաջ Մեծ Եպարքոս էր:

Պէյքըր փաշայի նկատմամբ եկած տեղեկութիւնք հետաքրքրական լինելի՛վակին: Մայրաքաղաքիս Լեվիթի Հէրըլա լրագիրն իւր երէկուան թրւում Սնդիկերէն նամակ մը կը հղար տարակէ Հայէպէն գրուած (փետր. 9), որուն հետեւեալ հաստատման ամբողջագրէն կը թարգմանեմք՝ առանց մեր կողմէն որ և է խորհրդածութիւն աւելցնելու:

« Պէյքըր փաշան, կըսէ անգլիական լրագրին թղթակիցը, Տիարապէթիին նահանգն Հայէպէն նահանգէն աւելի դաշտացելի վիճակի մէջ գտաւ: Ապէտին փաշայի խառութեան պատճառաւ Գրգալիան հաւրաստարութեանց ամեն երկիւղ փառատած լինելով, այդ դաւառն հանդարտ վիճակի մէջ էր: Գրգալիան արեւել զլուխն երբեք արեւելի բանտ կը գտնուէն ի Հայէպ, բայց պատճառ կայ ենթադրելու թէ Պէյքըր փաշան անոնց (այսինքն բանտարկեալ Գիւրգալէյ, յետեւ) դէմ եղած պաշտօնական դործողութեանց մէջ անտեղի աճապարանայ և անկաշնորհութեան հետքեր նշմարած լինելու է, որովհետեւ կըսուի թէ նոցա ընթացքն աւելի մանրասրտեղ քննութեան մը պիտի ենթարկի, որոյ հաւանականաբար արգիւնքը պիտի լինի յիշեալ բանտարկեալ պէյքըրէն ոմանց արձակումը: Նահանգային վարչութեան բարեօրմանը դէմ ա-

մենամեծ արգելքը, որուն տեղեկացաւ Պէյքըր փաշան Տիարապէթիին գտնուած ժամանակ, սա լինել կը թուի թէ Գուրգալիան սովորութիւն ունի Հայէպէն կողմէն փոխանակադրելու քաշել նահանգային անտուկներու վրայ, որով յիշեալ սընտուկներուն մէջ պատրաստ դրամ չմտր նահանգային սովորական ծախսը համար:

« Ռաիսիանութիւնը՝ բարեկարգելու ձեռնարկ մ'եղած էր, բայց երբ ամառը լինի եկաւ, անտուկին մէջ դրամ չկար նոր օստիկանութեան անդամաց վճարելու, որք անմիջապէս հրաժարական տուին իրենց պաշտօնէն: Դատարանաց տեսուչ (Ատլիէ Միւնիսթրի) Ֆէրիդ պէյ լաւ ծառայութեամբ կըսէ ի Տիարապէթիին, ուր այս մասնաւոր պարագային մէջ, նորահաստատ դրութիւնն յաջող կիրառութիւն ունի: Ուղիներու շինութիւն, երկրին ընդհանուր կառուածադրութիւնն և ժողովրդեան ճիշդ վիճակագրութիւնն, հասարակային կրթութեան բարձրագոյն վիճակի մը մէջ դրուելն, — այնպիսի նիւթեր են, որք Պէյքըր փաշայի յանձնախմբին դործողութեանց մէջ արժան եղած աւելի կը բռնեն: Ինչ որ ալ լինի այն յաջողութեան տարիճանն, ում հասնելու սահմանեալ են Պէյքըր փաշային և հետը գտնուող պաշտօնատարներէ կազմեալ յանձնախմբին դործողութիւնքն, ստույգ է որ այն մանրակտուգական եղանակն, որով Պէյքըր փաշան քննութեան նիւթ կըսէ դաւառական վարչութեան մասնաւորութիւններն, արդէն նոր յոյսեր արթնցուցած է ժողովրդեան աւան կարգերուն մէջ:

« Պէյքըր փաշայի անդուլ ջանքերէն քրիստոնէի իրենց համար մեծամեծ օգուտներ յուսալը բնական է, բայց պարմանալի է տեսնել թէ իսլամք ևս Պէյքըր փաշայի աշխատութիւններն անիրաւութեան աղաւտելու իրեն հաւանական միջոց մը նկատուի սկսած են: Զջմարտութիւնն այս է որ անցելոյն մէջ իսլամք քրիստոնէից հետ հաւասարապէս, եթէ ոչ աւելի, քննու կըստ յոյսի վարչութեան է: »

Կայսերական հրամանագիր մը Ռուսիայի երկաթուղեաց ընկերութեան Աւստրիական ընկերութեան փոխուղիւն և Արեւելեան երկաթուղեաց ընկերութիւնն անուրը կը վաւերացնէ:

Վաղըթ լրագիրը Լոնտոնային եկած հեռագրէ մ'առնելով կը ծանուցանէ թէ Օսմանեան արժեթուղի ունեցող Սնդիկայի ժողով մ'ընելով, խորհրդարանին ազբասադիր ալ որոշեր են: Ազբասադիր Բ. Դրան առաջարկած 100ին 1 տոկոսը չընդունելով, 100ին 2 տոկոս կը պահանջեն, և կը յայտարարեն թէ այս տոկոսի դուրսը պատրաստելու համար պէտք եղած եկամուտներն ալ պիտի ցուցնեն իրենք:

Երուսաղէմայ Ս. Պատրարքէն Պատրարքարան եկած արագածագիր մը կը ծանուցանէ թէ Սուրիոյ կուսակալութեան Համա Սանճագին ներքեւ Հոմի գիւղին Նասարիյէ կողմէն Արաբները 25 յոթն գիւղին վրայ յարձակելով՝ երկու երեւելի Ասորիներ սպաններ են:

Յոյն լրագիրը սուտ կը հանեն այն լուրը թէ Վեհ. Սուլթանն հաղար ոսկի տուել է Յունաց նորահաստատ գաղացին շինութեան համար:

Մայրաքաղաքիս Հրեայք մեծաւուն Պ. Գրէմիէօն մահուան տարի Պալատի Սինակոկային մէջ կրօնական պաշտօն մը կատարեցին, որուն ներկայ դատուեցաւ Պ. Ֆուրիէ իւր որդոց հետ Պ. Գրէմիէօ խորայեղական միութեան նախագահ էր, և շատ բարեբ. ըրած է իւր ազգակցաց:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ե Մ Շ Ո Ս Ե Ո Ւ Մ Ո Ւ Մ Ե

Կրէկ իրիկուս ցորակցաւ	11.32
Յ. յաւառու բացուցաւ	11.27
Կէս օրին	11.27
Րուսիի երկաթուղի	Փր. 38 75
Քրիստոս	Իւր. 745
Թրակիայ	Օսմ. Իւր. 3,50

ԲՆԱԾԱԲ ԱՐԴԱՐՈՒՄ

13 փետրվար

Ստիլթի Ժէնըրալ Բաժ. Անգլ. Իւր. 4,5	
» ֆոնտանկութեան	3.5
Կ. Պուլոյ Պաշային	6 25
Քրէտի Ժէնըրալ	3.29
Իւր. 1863	3. 60
» 1865	» 62
» 1869	» 62 25
» 1872	» 18
» 1873	» 54

ԲՆԱԾԱԲ ԴՐԱՄԱՌՈՒՄ

13 փետրվար

Անգլ. Իւր.	ըր. 110 2
Դարձն ունի	» 87 17
Իմպերալ Ռուս	» 90 4
Ռուսական թղթագրամ 8 լալ. 30 քարթ	
Գըրոյից	ըր. 51 30
Մէհիսիի տարբերութիւն	» 7 28
Հինգ շոյ	» 21
Մէթալիք	» 21
Պրիւն	» 465 —
» 5 փարանոց	» 162

Թ. Պ. Ա. Կ. Թ. Ի. Ն. Բ. Մ. Ս. Ս. Ս. Լ. Ր. Ս. Բ. Ն. Բ.

Վան 19/31 Դեկտ. 1879

... Խմբագիր

Մի սրտաշարժ տեսարան ալ կը ներկայացնէր Նոյ. 22ի օրը՝ երբ Երեմիայի դպրոցը բացուեցաւ:

Ալեքի միմունը, պառաւի ուժգին կուրծք ծծեալ, Հայերու արտասուելից աչքերը, մայրերու հեկեկաձայն աղօթքը, երիտաւորաց բորբոքեալ զգացումները, դպրոցական չեղող աղայոց և օրիորդաց լաջը՝ որք դպրոցին զրկուած լինելու համար կը լայնի, ուսանողաց բերկրութիւններ՝ որք նոցա դէմքերու վրայ յայտնի կերեալին, այս ամենը ահա նայն սրտաշարժ տեսարանին մաս կը կազմէին և որք ակամայ արցունքով կը թրջէին դաստիարակութեան վրայ խորհող մը աչքերը: Չըկար մի բերան որ չօրհնէր ընկերութիւնը, որ կուգար իրենց մերկ և բուրբ մանկտեայ ապագայն տընտրիել, և մասնաւորապէս զիս, զի կը կարծէին թէ ես էի իրենց դպրոցի լայնամաս պատճառը: « Փառք քեզ Աստուած, (այս բառերը անդադար ամեն շրթունքներէն կը լըսուէին), այնպիսի չմեռանք մինչև որ այս օրն ալ տեսնուք: »

Մեր դաստիարակութեան պաշտօնի համար դիւզացիներէն այսպէս համակրանք հիւրասիրուած ժամանակին, Հայ դիւզացիներու ուսումնասիրութիւնը ու փութալանութիւնը յիշած ժամանակ, ինքնախաբէութիւն տրած պիտի լինիմ, եթէ ծածկեմ պարզ տգիտութեան տըգիւնը եղող այն ընդդիմութիւնները, որք մեր դիմացը եղան: զի ինչպէս մեր ազգի մէջը, նոյնպէս ալ մեր դիւզերու մէջը չկայ սկզբունք:

